

9525

638-2

h-61

ՁԻՄ
909 Օ աստվածանուն
909



355

ԻՆՁ ՄԻՋՈՅՆԵՐՈՎ ՄԵԶՆՆՈՒՄ ԿԱՐԵԼԻ Է ԼԱՒ ԲԵՐՔ

ՍՏԱՆԵԼ ԶԵՐԱՄԻ ԱՌՈՂՋ ՍԵՐՄԻՑ

Մենք կաշխատենք պատասխանել այս հարցին աչքի առաջ ունենալով թէ մեր տեղական ձեւն ու պայմանները և թէ եւրոպական գիտուն շերամա պահանքի գործ դրած ձեւերն ու կանոնները.

1. ՍԵՐՄԻ ՊԱՀՊԱՆԵԼԸ

Սերմը ինչպէս հարկն է պահպանելու համար պէտք է զիտենալ, որ նա էլ, ինչպէս ամեն կենդանի և բոյս, ներշնչում է թթուածին և արտաշնչում ամիւածին և շոգիացած ջուր: Այս պատճառով է, որ նրա քաշը հետզհետէ թեթեւանում է՝ առաջին ամիսը հարիւրին 2, երկրորդ ամիսը հարիւրին 1, հետեւեալ 6 ամիսը (ձմեռը) հարիւրին 1, իսկ տասներորդ ամիսը (թուխս գնելու միջոցը) հարիւրին 9: Ուրեմն սերմը մեր խնամքին աւելի կարօտ է առաջին, երկրորդ և տասներորդ ամիսները, քան թէ ձմեռվան 6 ամիսը, երբ համարեա թէ շնչառութիւն չունի:



2011

38.2
h-61

12002

Եւրոպայում լինում են յատկապէս սերմ պահելու համար շինած տներ, ուր յանձնում են ամենքը իրանց սերմերը: Խտալիայում մի ալգալիսի տուն ամեն ձմեռ ընդունում է մինչև հարիւր հազար ունցիա:

Սերմը ձմեռը պահելու համար պէտք է ածել փոքր քանակութեամբ և բարակ խաւով կտակէ քսակի կամ ծակծակոտ տուփի մէջ և կախել առաստաղից (օրճանք), որով սերմը ազատ կը մնայ թէ ապակաւած օդից և թէ մկներից:

Սենեակը, ուր պահվում է սերմը, պէտք է լինի չոր՝ որ խոնաւութիւնից չը խափանվի սերմի արտաշնչութիւնը, և ցուրտ, ուր կրակ վառվում չը լինի. ցրտի աստիճանը ոչ պակաս -2° Ր. 1): (Փորձված է որ— 24° էլ չէ վնասում սերմին): Կակուղ ձմեռը մինչև անգամ հարկաւոր է սերմը ցրտի տալ սաղմի ձևակերպութիւնը հեշտացնելու համար:

2. ՍԵՐՄԻ ԹՈՒՄ ԴՆԵԼԸ

Սերմը եթէ թողնեն իր գլխու բնական կերպով դուրս գալ, ոչ միայն լետ կը մնայ, այլև տկար որդներ կարտադրէ. որովհետև ձուի կազմութիւնը առ-

1) Զերմաչափ չունենալ անհրաժեշտ է ամեն շերամապահէ, զործածութիւնը իմանալը՝ նմանապէս. (-1° նշանակում է 1 աստիճան ցուրտ, 1° նշանակում է 1 աստիճան տաք): Զերմաչափերը պահալան տեսակ են. այս յօդուածում մեր զործածածը անուանվում է Րէսկէ:

հասարակ չէ ներում, որ առանց վնասվելու երկար ժամանակ մնայ թուխ դրած: Այս պատճառով զարնանը՝ յարմարվելով թթեւութեան բացակայուն հետ՝ անըտեղախիտում են այն սենեակը, ուր պահվում են որդեր, բարակ փռում են մի յարմարաւոր ամանի մէջ և որպէս զի ամեն կողմից օդ առնելով միաժամանակ դուրս գան, երբեմն երբեմն խառնում նրան՝ տաքութեան աստիճանը բարձրացնելով օրական $1/2^{\circ}$ կամ 1° մինչև հասնում են 15° :

Սերմը հասնելու համար առանձին սենեակ չը յատկացնողները Եւրոպայում զործ են ածում լեռնանուանված մի զործիք: Մենք զրա փոխարէն կարող ենք օգուտ քաղել այնտեղ զործադրված մի ձեւից, որ հետեւեալն է. լցնում են տաք ջրով փոքրիկ հոդէ կուժեր, փաթաթում շորով և շարում այն կողովի (սալակ) չորս կողմը, ուր զրված է սերմը: Միայն պէտք է ուշադիր լինել կուժերը հեռացնելու կամ մօտեցնելու՝ նայելով շատ թէ փոքր տաքութիւն է հարկաւոր, բայց միշտ ամենապակասը մէկ թիզ հեռի պահելով կուժերը կողովից:

Յանկարծախի (ոչ աստիճանաբար) փափոխութիւնը ցրտից տաք և տաքից ցուրտ՝ շատ վնաս է սերմին:

3. ՈՐԴՆԻ ՎԵՐ ԱՌՆԵԼԸ

Որդները դուրս են գալիս քստ մեծի մասին առաւօտները: Առաջին և չորրորդ օրը քիչ են դուրս

զայլտ, իսկ երկրորդ և երրորդ օրերը՝ շատ: Հինգե-
րորդ և հետեւեալ օրերի դուրս եկածը ոմանք գէն
են ածում:

Որպէս զի դուրս եկած որդներին հետ սերմ էլ
չը վերառնանք՝ պէտք է աւել փութի սերմի երեսից և
յետոյ տերեւ գնել:

Եւրոպայում ամեն մի ժամվան դուրս եկած
որդներ առանձին են պահում. մենք, եթէ այդ չենք
կարող անել, զոնեա պէտք է աշխատենք ամեն մի
օրվանը առանձին պահել: Նոյնը պէտք է անել և
ամեն անգամ որդներին քնից վեր կենալուց յետոյ:

4. ՈՐԴՆԻ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Առաջին և երկրորդ քներին տերեւը կտրտած
պէտք է տալ: Եւրոպայում այնուհետև տերեւը ձիւ-
ղերից պոկած են տալիս. իսկ մեր հատարակ թթե-
նիների տերեւը, մանր լինելուն համար, մանաւանդ
որ մենք առաջին 1) վրայ չենք պահում որդներին,
կարելի և մինչև անգամ աւելի լաւ է բարակ ձիւ-
ղերով տալ:

Եւրոպայում որդներ բնաւ գետնին չեն դնում,
այլ մի քանի դատիկան (էտաժ) տախտեր են կա-
պում ու նրանց վրայ պահում որդներին: Մեղանում,

1) Տե՛ս մենք զորձ ենք ածում առաջ պոլէս բառի
մարտի:



36060-66

եթէ թանգ նստելուն համար այդ ձեռնտու չէ ա-
նել, զոնեա գետնի վրայ խոտ, յարդ (քիւլաշ) փը-
ռելու և յետոյ վրան որդներ դնելու է: Հին ձեռով
պահողներին հարկ չկայ այդ անելու, որովհետև
նրանք որդներին փոքր ժամանակը միշտ ամանների
մէջ են պահում, իսկ մեծացած ժամանակը՝ երեսը
քաշելիս միշտ շաշաշ (կերված տերեւի ձիւղերը)
միասին են վեր առնում:

Օրական քանի անգամ կերակրելը կախված է
սենեակի տաքութեան և օդի չորութեան աստիճա-
նից: Որքան տաք և չոր է սենեակը՝ այնքան շուտ
շուտ և թեթեւ պէտք է կերակրել: Մինչև 2 և 3
քուներ լաւ է թէ որ կարողանան 2+ ժամում 5 կամ
6 անգամ կերակրել: Երրորդ քնից յետոյ 4 անգամ,
բայց միշտ յարմարվելով նրանց ախորժակի հետ:
Կարելի է տալ և 3 անգամ, բայց այն ժամանակ
պէտք է տերեւի քանակութիւնը աւելացնել: Կերա-
կրելու միջոցները մօտաւորապէս հաւասարելու հա-
մար պէտք է վերջին անգամը գիշերը պտուկելուց
անմիջապէս առաջ տալ, իսկ առաջին անգամը ա-
ռաւոտ շատ կանուխ:

Երբ որդները ուզում են քնել՝ պէտք է պակա-
սացնել նրանց կերակուրը. քնի ժամանակ շատ փոքր
տալ միայն չքնածներին քաղցած չթողնելու համար:
Եթէ շատ են տալիս և տերեւը մնում է առանց
սպառվելու՝ շաղատի տակը բորբոսնում է և դրանից
ապականվում է օդը:

Երբ ուզում են լետ մնացած որդները առաջա-

ցածների հետ հաւատարացներն ընկածներին տեղաւորում են շերամնոցի այն կողմը ուր տաքութիւնը աւելի է և շուտ շուտ կերակրում, իսկ առաջացածներին դնում են այնտեղ, ուր տաքութիւնը պակաս է և կերակրում օրը 2 անգամ: Երբ դնուցնում են շերամնոցի մեջ, ապա մէջից (դրոշմի վանդակի շախմատի) կտրուցնում են միջուկը:

5. ՈՐԴՆԵՐԻ ՇԻՆԵԼՐԻ 1)

Պէտք է աշխատել որ այս գործողութիւնը չը հարկաւորվի առաջին քնի ընթացքում: Եթէ որդներին տալիս են այնքան տերեւ, որքան պէտք է որդների տակը չոր է մնում, հետեւաբար և որդներին անհամակոտ անելը այդ հասակում դառնում է աւելորդ: Ամենքին յայտնի է թէ որքան որդներ են փչացնում որդներ շինելու ժամանակ՝ ինչքան էլ զգուշութեամբ շարժվեն: Ամեն քնի ընթացքում պէտք է որդները տակը մաքրել 2 անգամ, մէկ՝ քնելուց 2 օր առաջ, մէկ էլ քնից վերկենալուց և երկրորդ՝ կերակուրը պտելուց յետոյ: Քնից վերկենալուն պէս անմիջապէս շինելը լու չէ, որովհետեւ այդ ժամանակ որդները պէտք թող են լինում: Որդների տակը

1) Որդների տակը մաքրելը և նրանց նստացնելը որ կատարում են ամեն քնից յետոյ՝ Ազուլիսում անուանւում է «դրոշմ»:

մաքրելու ժամանակ պէտք է աշխատել որ փոշի չը բարձրանայ, դրանից առաջ են գալիս հիւանդութիւններ:

Տախտերի երեսը վեր առնելու համար Եւրոպայում գործ են ածում զանազան տեսակ երէշներ, որոնք թէ հեշտացնում են գործը և թէ որդներին չեն վնասում: Այդ գործիքները կամ շինած են լինում թելից ուռւկանների (թոռ) պէս, կամ պատրաստած՝ թղթի մեծ թերթերից՝ ծակծակոտելով նրանց. թէ թելի և թէ թղթի երեսքաշերի ծակերը յարմարեցրած են լինում որդների հասակին: Երբ ուզում են տախտերի երեսը վեր առնել՝ փռում են երեսքաշերը տախտերի երեսին և տերեւ ցանում վրան. արթուն և առողջ որդները իսկույն անցնելով ծակերից բարձրանում են տերեւի վրայ. երեսքաշը որդներով միասին վեր են առնում, դնում ուրիշ տեղ և տակը մաքրում:

Տախտերի երեսը կարելի է քաշել նաև հասարակ կերպով, այսինքն երբ որդները հաւաքվում են նոր դրած տերեւի վրայ՝ վեր առնել տերեւը և զգուշութեամբ դնել ուրիշ տեղ, միայն թէ պէտք չէ որդներին կուտակել (դէզել) միասին տեղափոխութեան ժամանակ:

Երկրորդ քնից յետոյ պէտք է աշխատել հետզհետեւ աւելի և աւելի ընդարձակ տեղ տալ որդներին՝ նստացնելով նրանց:

Մեզանում ոմանք գործը երբ թէ հեշտացնելու

Համար որդերը Եփեսոս 2) երրորդ քնից վեր կեն-
նալուց լետույ և ոչ՝ չորրորդ, ինչպէս առհասարակ
անվում է: Դրանով նրանք անկարելի են դարձնում
այնուհետեւ տակը մաքրելը մինչեւ վերջ:

6. ՏԵՐԵԻԸ ԵՒ ՆՐԱՆ ՊԱՀՊԱՆԵԼԸ

Թթենիները պէտք է այնպիսի տեղ և միմեան-
ցից այնքան հեռի տնկված լինին, որ վրաները միշտ
արեւ լինի: Փորձված է որ միշտ վրան արեւ ունեցող
թթենին տալիս է՝ որդներին հարկաւոր հիւթ հա-
րիւրին 45, մինչեւ կէսրվան 1 ժամը վրան արեւ
ունեցողը՝ հարիւրին 36, իսկ միշտ շուաքում դրա-
նուողը՝ հարիւրին 27: Դեռահաս թթենիները աւելի
են պարունակում որդներին հարկաւոր հիւթ, քան
թէ հինները:

Տերերը պէտք է պահել չոր և օդը մաքուր տե-
ղում:

Պէտք չէ մեծ քանակութեամբ տերեր հաւա-
քել միասին, որպէս զի թթուելով վնասակար չը
դառնայ:

2) Աշուղիսում մեղեւ երրորդ կամ չորրորդ քունը որդերը
պահում են փոքրիկ խմբերով, որոց ամեն մէկը բաժնւում է մօտ
մի քառակուսի արշին տեղ, եւ անուանվում է անդակաւ լեղուով
դուր: Մէկէն նշանակում է այդ տախտի միմեանց հետ խառնելը:

Անձրեւից թրջված տերերը առաջուց պէտք է
չորացնել և լետույ տալ որդներին: Անձրեւի ջուրը
թէեւ քստ երեւութին շատ վնասակար չէ, բայց զի-
րացնում է որդներին և դրանով հիւսնդութեան
պատճառ է դառնում: Դառնում: Դառնում: Դառնում: Դառնում:
Եթէ տերերը յանկարծական ցրտից վնասվել է,
կամ անընդհատ անձրեւ է գալիս՝ լաւ է սենեակը
ցուրտ պահել և կերակուրը փոքր տալ մինչեւ լաւ
տերերը հասնի:

Տերերը պահած տեղի և որդերը դրած սենեակի
տաքութեան աստիճանը պէտք է հաւասար լինի:
Եթէ այդպէս չէ՝ պէտք է տերերը դնել շերամնո-
ցում որդներին տալուց $\frac{1}{4}$ ժամ առաջ: Իսկ վերջին
քնին, երբ մեծ քանակութեամբ տերեր է հարկաւոր,
այս անկարելի լինելով պէտք է աշխատել, որ գո-
նեա տաքութեան աստիճանի զանազանութիւնը մեծ
չը լինի:

Յօդից թրջված տերերը հաւաքելուց լետույ խակոյն
պէտք չէ տալ որդներին, լաւ է միշտ երեկվանից
պատրաստ ունենալ 2 անգամ տալու պաշար:

Տերերը պէտք է այնպէս պահել, որ վրան փոշի
չը նստի:

7. ՇԵՐԱՄՆՈՅԻ ՏԱԳՈՒԹԻՒՆԸ

Որդների դուրս գալուց սկսած մինչեւ չորրորդ
քունը շերամնոցի տաքութիւնը պէտք է լինի 15°
կամ 16°, չորրորդ քնի ժամանակ 14° կամ 15°:

չորրորդ քնից վեր կենսալուծ միջին ցախ գնալը՝ 16° կամ 17° ցախ գնալիս ոչ պակաս 17°: Սակայն Յուրտը եթէ աստիճանաբար է՝ չէ վնասում որդներին, այլ լետաձգում է նրանց զարգացումը: Տաքը նույնպէս եթէ աստիճանաբար է՝ չէ վնասում, այլ արագացնում է որդները գործը: Այնպէս որ երբ պահում են որդն 12°-ից 14° — շերամապահութիւնը տեւում է 40-ից 50 օր, իսկ երբ պահում են 16°-ից 20° — քաշում է 30-ից 35 օր:

Եթէ սենեակի օդը չափից աւելի ցուրտ է՝ պէտք է տաքացնել արուեստական կերպով, իսկ եթէ չափից աւելի տաք է՝ որ լինում է սաստիկ շոգերի ժամանակ՝ պէտք է լուսամուտները փակած պահել և յետոյ վարագույրների ձեւով կախել պաղ ջրում թրջած շորեր:

Ջերմնոցը տաքացնելու համար Եւրոպայում զանազան վառարաններ (պէչ) են շինում, որոնցից ամենապարզն այն է, որ վառարանը սարքում են գլխումը և նրանից մի շարք խողովակներ (տրուբա) անց կացնում օձաձև՝ սենեակի պատի երկայնութիւնով: Իսկ մեղանում եթէ ամեն սենեակում մի մի լաւ, այսինքն ծուխ չանող ծխնելոյզ (բուխարի) լինի՝ բաւական է:

8. ՇԵՐԱՄՆՈՅԻ ՕԴԱՓՈՒՈՒԹԻՒՆԵՐ

Եւրոպայում շերամնոցները ունենում են օդափոխութեան համար յատկապէս շինած դռնակներ

սենեակի յատակում (պօլ), որոնք յայտնի ժամերին բաց են անում և փակում, իսկ մենք պէտք է բաւականանանք լուսամուտները և դռները բաց անելով՝ երբ դրսի օդը չափից աւելի ցուրտ կամ տաք չէ: Լաւ է լուսամուտների առջեւ վարագույրներ կախել, որ այլուղ արեւի ճառագայթները և՛ բացած ժամանակ՝ օդի հոսանքը (քամի) չը վնասեն որդներին:

Երբ գուրար սաստիկ շոգ է, պէտք է բանալ լուսամուտը, որով միայն տաքութիւն ներս կը մտնի, այլ այդ գործողութիւնը կատարելու է երեկոները և առաւօտները:

Քանի մեծանում են որդները՝ այնքան աւելանում է օդը շուտ շուտ մաքրելու հարկը, որովհետեւ թէ որդները իրանք են ապականում օդը իրանց արտաշնչութեամբ և թէ նոցա կղկղանքն ու տերեւի մնացորդը:

9. ՈՐԴՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Որդնի հիւանդութիւնները բոլոր տարափոխիկ են, բացի դեղներուց: Հիւանդացած որդնը բժշկելու հնար չեն գտել մինչև այժմ. բոլոր արածները միայն նախագգութիւններ են:

Եթէ որ և իցէ սենեակում նկատում են հիւանդ որդն՝ նրան իսկոյն դուրս են ձգում, որ միւսներին էլ չը վարակէ:

Եթէ տեսնում են որ հիւանդ որդներ շատ կան և հետզհետէ աւելանում են՝ նօսրացնում են նրանց, մաքրում են տակները, աւելացնում են տաքութեան

աստիճանը մինչև 22⁰, կերակրում են շուտ շուտ և այսպիսով բոժոժադործութիւնը արագացնելով՝ կարողանում են փոքր ի շատե՛ բերք ստանալ մինչև հիւանդութեան սաստկանալը: Տակը մաքրելը եթէ կատարվում է քնից լետոյ՝ աւելի լաւ է վեր առնել միայն երեսի առողջները և բոլոր մնացածը դէն ածել:

Աշխատում են որ սենեակում փոշի, կանդանած օդ և տաք խոնաւութիւն չլինի, որովհետեւ զրանք նպաստում են հիւանդութիւնների զարգանալուն:

Այն որդները՝ որ հիւանդանում են վերջին քրնումը՝ բոժոժ գործում են, թէև նրանց հիւանդութեան հետքը բոժոժից երևում է:

Հիւանդութիւն: առհասարակ կայանում է նրանում, որ տեղեւների վրայ, կամ որդների մէջ հաւաքվում են մանրադիտական (հասարակ աչքի համար անտեսանելի) կենդանիներ կամ սնկորդներ. որոնք իրանց աւերուածքը անելուց լետոյ մնալով շերամնոցի պատերի, կարասիքի, ևն. վրայ՝ վերածնվում են հետեւեալ տարին: Այդ հիւանդութիւնների առաջն առնելու համար կայ երկու միջոց՝ մէկը Պատտէօրի ձևով սերմ հանելը, որի մասին լետոյ, միւսը՝ ախտահանութիւնը, որ հետեւեալն է՝

Հէնց որ բոժոժը քաղում են, շաղատը դուրս տալիս ու սրբում՝ փակում են սենեակի բոլոր ծակերը, մինչև անգամ ծխնելոյզը (բոխարին) և ծուխ տալիս: 7 միսալ ծծումը (քուքուրդ) մի խորանարդ 1)

1) Սենեակէ խորանարդ չափը երկուսուկէ համար պէտք է

արշին օդի համար, կամ 7 ֆունտ ծծումը 100 խորանարդ արշին սենեակի համար բաւական է: Օտար խառնուրդից ազատ ծծումը 4 բաժին անելով ածում են հոդէ ամանների մէջ և դնում սենեակումը զանազան տեղերում, վառում և դուրս դալիս՝ դուր պինդ փակելով: Այս գործողութիւնից մինչև 24 ժամ չանցնի՝ պէտք չէ ներս մտնել սենեակի մէջ: Յետոյ ախտահանութիւնը աւելի կատարեալ անելու համար պէտք է սենեակի շարժական առարկաները լուանալ վազող ջրում, իսկ անշարժ առարկաները և տուներ լուանալ չը հանգած կրի ջրով:

Այս գործողութիւնը եթէ որեւիցէ պատճառով բոժոժաքաղից լետոյ չէ կատարվում՝ գոնեա ձմեռը պէտք է կատարել:

Աւելի լաւ է եթէ որդնը գնելուց 8 օր առաջ երկրորդ անգամ ծծմբի ծուխ տան սենեակին նշանակած ձևով և օդը լաւ մաքրեն:

10. ՈՐԴՆԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԿԵՆԴԱՆԻՔԸ

Մըշխէրը վնասում են աւելի առաջին և երկրորդ քներումը. այս հասակում գժուար չէ նրանց դէմ պաշտպանել որդներին՝ սեղանի կամ տախտի (պօլիա) ոտները դրած լինելով ջրով լի կամ պղնձէ

չափի սենեակի երկարութիւնը, լայնութիւնը և բարձրութիւնը ու այդ թիւերը բազմապատկել միմեանց հետ. դոյացած գոմարը նշանակում է սենեակի խորանարդ չափը:

ամանի մէջ: Կարելի է նաև փաթաթել սեղանի ոտները բամբակի հաստ պատրոյզով կամ խաղել կաւիճով (մէլ):

Մշէնի գէմ գործ են ածում մկնդեղ կամ ուրիշ այսպիսի թունաւոր դեղ խառնած խմորի մէջ. բայց որովհետև այս միջոցը անզգուշ կերպով գործ գնելով կարող ենք փորձանքի հանդիպել — աւելի լաւ է որոգայթներ (թալակ) դնելը: Իսկ որդների փոքր հասակում, քանի որ մեծ տեղ չեն բռնում, կարելի է նրանց դնել մի տախտի վրայ՝ որ կախուած է առաստաղից (օրձանք) և թուկերի վրայ բարձրից հաղցրած է զազ (հոս, դէտպան) փշերը գէպի վեր:

Թաւառների մուտքը խափանելու համար Եւրոպայում շերամնոցի լուսամուտները ծածկում են երկաթէ թելի հիւսուածքով:

Մասշտ և Կենդանիների գէմ շերամնոցը մաքուր պահելով՝ գուցէ կարողանանք փոքր ի շատէ պաշտպանակել:

11. ՈՐԴՆԸ ՅԱԽԵԼԸ ԵՒ ԲՈԺՈԺԱՔԱՂԸ

Թէ երբ և ինչպէս պէտք է ցախէլ, նայելու թէ երբ պէտք է բոժոժը քաղել և լետոյ (բոժոժը ինչ անել — ամեն շերամապահ գիտէ: Մենք միայն կը նկատենք, որ Ազուլիսում գործ ածող ցախի մեծ մասը անպարմար է այդ նպատակի համար: Խիտ ծակող փշերով թուկերի տեղ աւելի լաւ է գործ

ածել ուրիշ տեսակ փափուկ խոտեր. մինչև անգամ բարակ ճիւղերից կարելի է փոքրիկ արցակներ (դաստա) կապել և դնել:

Բոժոժը եթէ ժամանակին չեն չորացնում կամ խեղդում՝ այնուհետև օրական հարիւրին մէկ պակասում է քաշը:

12. ՍԵՐՄ ՎԵՐ ԱՌՆԵԼԸ

Մեր տեղական որդնի հիւանդութեամբ վարակուելը շատ տարի է որ մեզ ստիպում է սեփական որդնից սերմ չը վերցնել, այլ ամեն տարի դիմել Եւրոպային՝ թանգ վճարելով առողջ սերմի համար: Այդ առողջ սերմը ստանալու համար այնտեղի գիտնական շերամապահները հետազոտում են Պաստէօրի ձևով առաջ ամեն մի սենեակ և լետոյ ամեն մի թիթեռնիկ առանձին առանձին, այն սենեակի բոժոժից, ուր հիւանդ որդն է ելևացել, բնաւ սերմացու չեն վեր առնում. և այն թիթեռնիկը՝ որ սերմ ածելուց լետոյ, խոշորացուցի տակ հիւանդութեան նշաններ է յայտնում՝ նրա ածած սերմը դէն են ձգում:

Եթէ երբեմն Եւրոպայից բերված սերմերում պատահում են հիւանդոտներ՝ ահա այս դէն ածելիք սերմերիցն են լինում, որ էժան գնով ծախում են այնտեղ անխիղճ մարդիկ:

44 54

44 54 1884

9525

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Գիտնականների Հաշուով 1 մսխալ առողջ սեր-
մից վեր առած որդեր, եթէ պահվի ինչպէս Հարկա-
ւորն է, պէտք է տալ 30 ֆունտ բոժոժ:

Վեր առէք ԱՌՈՂՋ ՍԵՐՄ, պահեցէք ՆՅՍՐ
(սէյրազ), ԿՈՒՂՏ ու ՄԱՔՈՒՐ (ոչ աղականած)
ՕՂՈՒՄ—և աղպիտի արդիւնք կը ստանաք:

ИНСТИТУТ
ВОСТОЧЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ЗУСН-Арм ССР

Доз. цензурою С.-Петербургъ. 31 Декабря 1884 г.

Типог. И. Мартиросянца. Орбел. ул., № 1/2.

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0082363

